

ՄԵՏԱՂԵ ՍՊԱՍՔԻ ԶԵՎԵՐԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄԸ ՎԱՆԻ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽԵՑՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մասնագետները վաղուց նկատել են, որ հին Հայաստանի և հարևան երկրների խեցեգործական արտադրության մեջ առանձնանում է հիմնականում ծխական կամ տոնական նշանակության արվեստի հոյակապ նմուշներ հանդիսացող իրերի մի ոչ մեծ խումբ, որոնք կրկնում են ձուլածո կամ կոփածո մետաղե սպասքի ձևերը: Այսպես, օրինակ, դեռ միջին և ուշ բրոնզե ժամանակաշրջանի խեցեգործական արտադրության մեջ հանդիպում են կավե առարկաներ, որոնք իրենց ձևերով նույն և ավելի վաղ ժամանակաշրջանի մետաղե իրերի ընդօրինակություն են: Հատկապես հետաքրքիր են կիրովականյան և թրիալիթյան ոսկե, արծաթե գավաթները, թասերի ձևերը և զարգամտոտիվները, որոնք իրենց ընդօրինակումներն ունեն լճաշենի, Միծեռնակարերդի, Ոսկեվազի, Վիրին նավերի կավանոթների մեջ և միաժամանակ նման են փոքրասիական և Միջերկրականի մետաղե ու կավե իրերին¹:

Այս տեսակետից բացառություն չէ մ. թ. ա. 8—7-րդ դդ. Վանի թագավորության խեցեգործական արվեստը: Ինչպես նշում է Բ. Բ. Պրոտրովսկին², վաղուց արդեն նկատվել է, որ ուրարտական խեցանոթները՝ մեկ կանթանի սափորներ, փիալաներ, թասեր, հաճախ ընդօրինակվել են մետաղական սպասքի նմանօրինակ ձևերից:

Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, նա հիմնականում ստուգարանել է անոթների մի քանի ձևեր: Վերջին տարիներս հատկապես Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի տարածքից հայտնաբերված բազմաթիվ նոր նյութերի շնորհիվ պարզվում է, որ կավե անոթների բազմազան և հարյուրավոր օրինակներ կրկնում են նմանօրինակ մետաղե սպասքի ձևերը՝ մի ճրտույթ, որը Վանի թագավորության կավագործության մեջ ուներ մասսայական բնույթ: Այս նյութերը, որոնք հայտնաբերվել են տարբեր բնակավայրերից, ամրոցներից և դամբարաններից, կազմում են բավականին մեծ խումբ, և որոնց մեջ աչքի են ընկնում կարմիր, բարձրորակ անգորպապատ մեկ կանթանի սափորները, թասերը, փիալաները, գնդաձև անկանթ անոթները, գավաթները և այլն:

Մեզ հայտնի մետաղե սպասքի ձևերը, որոնք ունեն իրենց կավե ընդօրինակումները, ավելի վաղ են թվագրվում (Իշպուխի, Մենուայի, Սարգուրի արձանագրություններով անոթները), և դրանց ընդօրինակումը կավանոթներում արտացոլված է ոչ միայն ընդհանուր ձևերի, այլև պատրաստման տեխնոլոգիայի տեսակետից մետաղե անոթներին բնորոշ առանձին մանրամասների պահպանմամբ, ինչպես օրինակ, կավե սափորների իրանի վրայի ուռուցիկ գոտիները, նրանց կանթերի, շուրթերի, հատակների ձևերը, փիալաների գնդաձև կլուստանախշերի և ուռուցիկ ներս ընկած հատակի կառուցվածքները և այլն, նման են մետաղե անոթներին:

Այս անոթների իրենց ձևերով բավականին բազմազան են: Մենք այն դասակարգել ենք հետևյալ խմբերի:

¹Կնդանե իրանով անկանթ սափորներ: Այս խմբի անոթները բազմաքանակ չեն՝ ընդամենը 6 հուշարձան: Սրանք, ըստ երևույթին, ընդօրինակում են մետաղե սպասքը, որի օրինակները

¹ Б. Б. Пиотровский. Археология Закавказья, Л., 1949, стр. 47; А. О. Мнацаканян. О двухцветной керамике Лчашена, Известия АН Арм. ССР, № 5, 1957; К. Х. Кушнарева. Поселение эпохи бронзы на холме Узерлик тепе, В кн.: Материалы и исследования по археологии СССР (МИА) 67, М., 1959, рис. 12, 13, 15; А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 65; С. А. Есабян. Ереван (археологический очерк), Ереван, 1969, стр. 43; Г. Е. Арешян. Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века.—Советская Археология, 1973, № 4; Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, 1975, стр. 218, 220.

² Б. Б. Пиотровский. Ванское царство, М., 1959, стр. 189.

մեզ հայտնի են Ալիշարից և Ալթին թեփեից³: Վերջիններս ունեն կարճ վիզ, քիչ դուրս ճկված շուրթ, գնդաձև իրան, որի վերին մասը զարդարված է ուռուցիկ գոտիով: Հաստակի մասում առկա է աննշան գոգավորություն, որն անոթին տալիս է փնդի ձև (աղ. 1-ին, նկ. 2): Մեզ հայտնի նմանատիպ կավե սափորները գտնվել են Վանի թագավորության հուշարձաններից և ունեցել են հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտավայր և Արաքսի աջափնյա շրջաններ (Վանի թագավորության հյուսիս և հյուսիս-արևելյան մարզեր), էրբրունի⁴, Կարմիր բլուր⁵, Օշական⁶, Իգդիր⁷: Բաստամ⁸, Արգիշտիխիխի, Արածանի—Սփրատ գետերի ավազան, Ալթին թեփե⁹ (աղ. 1-ին, նկ. 1, 3—7):

Մետաղե սպասքի բացարձակ ընդօրինակում է էրբրունից հայտնաբերված մոտ կես մետր բարձրությամբ սափորը (աղ. 1-ին, նկ. 1), որի կլոր իրանը, քիչ ճկված շուրթը, ուսի ուռուցիկ գոտին ինչպես տեսնում ենք, ճիշտ կրկնում են վերը նշված բրոնզե անոթների ձևերը: Կավե սպասքի այս տեսակը զուրկ է զարդանախշերից: Ինչպես նշում են Վանի թագավորության մետաղագործության և կավագործության պրոբլեմներով զբաղվող մասնագետները¹⁰, կրկրելով մետաղե թանկարժեք իրերի ձևերը կավե խեցանոթներում՝ վարպետները աշխատել են պահպանել մետաղագործի պատրաստած բրոնզե սափորների արտաքին տեսքը, բնորոշ գծերը: Բացի վերը նկարագրված ամբողջական սափորից էրբրունիում գտնվել են նաև նմանատիպ անոթների բազմաթիվ րեկորներ, որոնք վկայում են նրանց լայն տարածման մասին: Նմանօրինակ անոթ գտնվել է Արգիշտիխիխից, որը էրբրունու սափորից տարբերվում է միայն շափերով (աղ. 1-ին, նկ. 3): Կարմիր բլուրի, Օշականի և Բաստամի նմանաձև սափորների վերը նկարագրված մետաղե և կավե համանուն անոթներից տարբերվում են միայն ուսի վրայով անցնող ուռուցիկ գոտու բացակայությամբ (աղ. 1-ին, նկ. 4, 5, 6, 7), վկայելով այն մասին, որ կավագործ վարպետները մետաղե սպասքը ընդօրինակելիս նրա ձևերը պարզեցնում էին:

Միաժամանակ էրբրունից գտնված սափորի և մյուս անոթների վերլուծությունը ցույց է տալիս, որ կավագործ վարպետները ընդօրինակում և ոչ թե պատճենում էին մետաղե սպասքի ձևերը, տալով սափորներին տարբեր շափեր: Այսպես, Ալիշարի բրոնզե սափորը ունի 17 սմ բարձրություն, էրբրունիինը՝ 43 սմ, Բաստամինը՝ 9,5 սմ, Արգիշտիխիխիինը՝ 12 սմ:

Մեկ կանթաճի սափորներ: Այս մետաղե սափորները լայն տարածում են ունեցել Վանի թագավորության մ. թ. ա. 8—7-րդ դդ. հուշարձաններում: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեկ կանթանի 2 բրոնզե (մեկը՝ թեփի) և մեկ արծաթե սափորները¹¹, գտնված Կարմիր բլուրից (աղ. 1-ին, նկ. 8, 9): Վերջինս ունի 25 սմ բարձրություն, որի կանթի վերին և ստորին հատվածները զարդարված են պարույրներով և շեղանկյուններով: Սափորի վրա առկա է ուռուցիկ գոտի՝ սրացող եզրերով և երեք հիերոգլիֆ նշաններով: Մետաղե նմանատիպ անոթներ հայտնաբերվել են Թոփրակ կայի¹², Ուրմիայի տարածքի հուշարձաններից՝ Բեզայն¹³, Նուշի ջան¹⁴, ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանից, Պարսկահայքից, որ պահվում են Շվեյցարիայի, Մայնցի, Մյունխենի թանգարաններում¹⁵:

Դրանք հրապարակող հեղինակները նշում են, որ այս առարկաները գտնվել են Արևելյան Թուրքիայից, Իրանական Ադրբեջանից կամ Հյուսիս-արևելյան Իրանից: Շփոթություն չառաջաց-

³ С. И. Ходжаш. Керамика Эребуни.—«Сообщение Гос. музея изобразительных искусств им. А. С. Пушкина», вып. 4, М., 1968, табл. 1, рис. 4.

⁴ С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян. Эребуни, М., 1979, стр. 101.

А. А. Мартиросян. Город Тейшебани, Ереван 1961, стр. 131, рис. 51.

⁶ С. А. Есаян, А. А. Калантарян. Позднеурартское погребение Ошакана.—Историко-филологический журнал АН Арм. ССР, № 3, стр. 270, табл. 1, рис. 9.

⁷ Б. А. Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит.—Вестник Гос. музея Грузии, т. 13-В, Тбилиси, 1943, стр. 15, табл. 12, рис. 12.

⁸ L. V. Berghe en L. De Meyer. Urartu (een vergeten cultuur uit het bergland Armenië) Gent, 1982—1983, նկ. 206, 207.

⁹ С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян, նշվ. աշխ., էջ 101:

¹⁰ Barnett R. D. and Gükce. The find of urartian bronzes of Altintepe-near Erzingang. «Anatolien Studies», 16, London, 1953, p. 121—129.


¹¹ Б. Б. Пиотровский. Кармир блур, III, Ереван, 1955, стр. 13, рис. 13; так же Искусство Урарту, Л., 1962, стр. 88.

¹² S. Kroll. Keramik urartäischer festungen in Iran, Berlin, 1976, էջ 186, (այսուհետև՝ Ս. Կրոլ, նշվ. աշխ.):

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:


¹⁵ L. V. Berghe en L. De Meyer, նշվ. աշխ., նկ. 170, 171,



նեղու նագատակով այս շրջանների համար մենք ստորև կօգտագործենք Վանի թագավորության կենտրոնական կամ արևելյան մարզեր անվանումները:

Այս գտածոների մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկու բրոնզե սափորները, որ հայտնաբերվել են Վանի թագավորության կենտրոնական շրջաններից ու պահվում են Շվեյցարիայի և Մայնցի թանգարաններում¹⁶ (աղ. 2-րդ, նկ. 1, 2): Առաջինը իրենից ներկայացնում է 15,3 սմ բարձրությամբ մեկ կանթանի փոքրիկ սափոր՝ ուռուցիկ իրանով, երկար վզով, դուրս ճկված շուրթով: Անոթի իրանի վերին մասը զարդարված է երկու ուռուցիկ գոտիներով:

¹⁶ Նույն տեղում:



Իր ձևով այն նման է Կարմիր բլուրից գտնված արծաթե սափորին, տարբեր են չափերով: Երկրորդ անոթը՝ 23,7 սմ բարձրությամբ, նույնպես նմանվում է Կարմիր բլուրի արծաթյա սափորին, միայն այն տարբերությամբ, որ սրա վիզը կարճ է, և իրանն ունի կլորացող գնդի ձև, իսկ կարվածքում կանթը ավելի հաստ է և կլորավուն: Հաջորդ երկու մետաղե սափորները՝ բրոնզից և արծաթից (Մյունխենի թանգարան)¹⁷, իրենց ձևով ու չափերով մոտենում են Կարմիր բլուրի անոթներին, սակայն նրանցից առաջինի հատակը ունի կլորացող նստուկ, իսկ երկրորդը իրանի ամենալայն մասում՝ ուսուցիկ գոտի, որը չի նկատվում վերը նկարագրված բոլոր բրոնզե, արծաթե, ինչպես նաև կավե մեկ կանթաձևի սափորների վրա (աղ. 2-րդ, նկ.

¹⁷ Նույն տեղում:

3, 4): Ինչպես տեսնում ենք, մետաղե իրերի այս խմբի մեջ կա զգալի բազմազանություն, որն արտահայտվում է սափորների իրանի ուռուցիկությունը, վզի բարձրությունը, հատակի կառուցվածքով: Այս առանձնահատկությունները, ինչպես կտեսնենք ստորև, իրենց արտացոլումն են գտել կավագործ վարպետների արտադրանքում, որը մեկ անգամ ևս վկայում է նրանց՝ մետաղե սպասքի ձևերից ընդօրինակման մասին: Նմանատիպ կավե անոթներ՝ ակոսավոր կանթի, ճզմված շուրթի կառուցվածքի պատճառով հնագիտական գրականության մեջ ստացել են օյնսխյու անունը: Նրանք գտնվել են հետևյալ շրջաններում՝ 1. Վանի թագավորության հյուսիս և հյուսիս-արևելյան շրջաններ (Արարատյան դաշտ և Արաքսի աջափնյա հուշարձաններ), Էրեբունի¹⁸, Արգիշտիսի¹⁹, Կարմիր բլուրի՝ միայն № 29 մասանից 1036 հաս²⁰, Օշականից²¹, նաև Երևան քաղաքի տարածքի հուշարձաններից՝ Մոսկովյան փողոց (այժմ՝ Սարյան), Ավտոագրեզատների գործարան (աղ. 1-ին, նկ. 10—13), ինչպես և Բաստամից ու այլն²², Վանու լճի ավազան, Քոփրակ կայն (աղ. 2-րդ, նկ. 5, 6), Արծկե (Աղիլչիվազ), Հայկաբերդ (Չավուշ թեփե)՝ Բաղնոց²³, 3. Արածանի—Սփրատ գետերի ավազան, Նորշուն թևի, Կայալի դերե. 4. Ուրմիայի ավազան, Խոյ, Մուսասիր և այլն²⁴:

Այժմ մի քանի անոթների համեմատություններով փորձենք ցույց տալ մեր գիտարկումների արդյունքները, որոնք հաստատում են այս ձևի սափորների ընդօրինակման փաստը մետաղե նմանօրինակ անոթներից: Ինչպես տեսանք, վերը նկարագրված մետաղե անոթները հիմնականում վերաբերում են նույն տիպին՝ տարբերվելով վզի շափերով, հատակի և երբեմն էլ կանթի հարդարանքով: Թվարկված հուշարձաններից հայտնի բոլոր կավանոթների մեծ մասը իրենց ներկված կանթով կրկնում են մետաղե սափորների ձևերը: Նույնը նկատվում է գրանց հարթ ու օղակաձև նստուկով հատակների համեմատության ժամանակ, սակայն, ինչպես և անկանթ սափորները, տարբերվում են շափերով և ունեն 0,25—6 լ տարողություն: Այս անոթների նախերևինները երանգավորված են մուգ բալագույնից մինչև բաց վարդագույն և բաց դեղնավուն անգորով²⁵: Միաժամանակ տեսնում ենք, որ վարպետի նշանները և անգորսպատման երանգները վկայում են այս սափորների տարբեր արտադրողների պատկանելի: Հետաքրքիր է նշել, որ Օշականի № 25 դամբարանից հայտնի անկանթ սափոր²⁶ նույնպես ունի դեղնավուն անգորսպատման, իսկ երկու կարմիր անգորսպատման և մեկ սև սափորները, որոնց բունակները կտրվածքով կտրավուն են, հիշեցնում են վերը նկարագրված Մայնցի թանգարանի բրոնզե սափորի բունակի ձևը (աղ. 2-րդ, նկ. 2):

Գավաթ-բաժակներ: Այս խմբի մետաղե սպասքի օրինակները, որոնք ունեն իրենց կավե ընդօրինակումը, հայտնի են Ալթին թեփեի № 2 դամբարանից և Քոփրակ կայեից²⁷, Ալթին թեփեից գտնված արծաթից և բրոնզից այս անոթներն ունեն զանազան իրան, հարթ հատակ, աննշան կտրացող շուրթ (աղ. 2-րդ, նկ. 7, 8): Նույնն է կրկնվում Քոփրակ կայեից գտնված բրոնզե գավաթում (աղ. 2-րդ, նկ. 9): Մետաղական սպասքի այս տեսակը զուրկ է որևիցե զարդանախշից և միակ կավե ընդօրինակումը գտնվել է Կարմիր բլուրից: Նրա իրանին կա երկու կտրանցք, և ձառայել է որպես ծխաման²⁸ (աղ. 2-րդ, նկ. 10):

Փիլալներ: Վանի թագավորության մետաղագործական արտադրանքի մեջ կարևոր տեղ են գրավում մ. թ. ա. 9—7-րդ դդ. հոգևոր և աշխարհիկ բարձր խավի սպասքի բաղկացուցիչ մաս կազմող սակե, արծաթե և բրոնզե փիլալները, որոնք աչքի են ընկնում իրենց շքեղ արտաքին հարդարանքով: Այս, ձևով բազմազան անոթներից մի մասը նույնպես ընդօրինակել են կավագործ վարպետները: Այսպես, առաջին տիպի մետաղական փիլալները իրենցից ներկայացնում են ցածր իրանով, խիստ եզրագծված կամ ուղղանկյուն ուսերով զարդարված՝ հարթ կամ կտրավուն զարդանախշերով, կտրացող կամ կենտրոնում ներկված հատակով անոթներ, որոնք զրտ-

¹⁸ С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян. *Նշվ., աշխ., էջ 100, նկ. 83, 86, 88*, С. И. Ходжаш. *Керамика Эребуни*, табл. 8, рис. 2: Ս. Ա. Նալյան, *Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ 33*:

¹⁹ А. А. Мартиросян. *Аргштитхинни*, Ереван, 1974, стр. 144, рис. 61, 62,

²⁰ Б. Б. Пиотровский. *Ванское царство*, стр. 145.

²¹ С. А. Есаян. *Находки урартских изделий в Ошаканском могильнике*, В кн.: *Древний Восток и мировая культура*, М., 1981, стр. 95.

²² Ս. Կոթլ, *Նշվ. աշխ., էջ 128, նկ. 46*:

²³ L. V. Berghe en L. De Meyer, *Նշվ. աշխ., նկ. 195—202, 208*:

²⁴ Ս. Կոթլ, *Նշվ. աշխ., նկ. 46*:

²⁵ Б. Б. Пиотровский. *Искусство Урарту*, стр. 108.

²⁶ С. А. Есаян, А. А. Калантарян. *Նշվ. աշխ., էջ 270*:

²⁷ Ս. Կոթլ, *Նշվ., աշխ., նկ. 85*:

²⁸ Б. Б. Пиотровский. *Кармир блур*, II, Ереван, 1952, стр. 36, рис. 17.

նըվել են Քոփրակ կալեից²⁹, Կարմիր բլուրից³⁰, ինչպես նաև Վանի թագավորության անհայտ հուշարձաններից և պահվում են Եվրոպայի թանգարաններում³¹ (Մայնց, Լես Արս, Բեռլին): Նկարագրները դրանցից մի քանիսը, որոնցից ամենահին օրինակը արծաթից է, Իշպուհիի արձանագրությունը և պահվում է Լես Արսի թանգարանում (աղ. 2-րդ, նկ. 13): Անոթն ունի քիչ դուրս ճկված շուրթ³², իսկ կլոր իրանը վերից վար զարդարված է գդալաձև երկարավուն ուռուցիկ նախշերով: Մյուս նույնատիպ անոթը ոսկուց է, պահվում է Մայնցի թանգարանում (աղ. 2-րդ, նկ. 11): Այն կտրվել է որևիցե արձանագրությունից և իր շափով մոտենում է Լես Արսի թանգարանում պահվող արծաթյա անոթին, կրկնելով սրա ձևը³³, նույն ձևն ունեն նաև Մայնցի թանգարանում պահվող երկու բրոնզե նույնատիպ փիլալաները (աղ. 2-րդ, նկ. 15, 16): Քոփրակ կալեից գտնված անոթը ուսին ունի երկու հիերոգլիֆ նշան, ինչը բացակայում է Քեյշեբրահինի պեղումներից գտնված բարձրորակ, կենտրոնում ներճկված հատակով, Սարգուր 2-րդի արձանագրությամբ փիլալաներում (աղ. 2-րդ, նկ. 12): Այս տիպի մեջ առանձնանում է նույն Մայնցի թանգարանում պահվող նրբագեղ արծաթյա փիլալան³⁴, որի զարդանախշման եղանակը տարբերվում է մնացած բոլոր մետաղյա համանման անոթներից իրանի վրայի ելուստների կլորությամբ (աղ. 2-րդ, նկ. 17): Նման բարդ անոթները, ի տարբերություն մյուս խմբերի, ավելի քիչ են հանդիպում և վկայում են կավագործ վարպետների բարձր մասնագիտացման մասին, որոնք աշխատում էին արքունիքի և նահանգների կենտրոնների բարձր խավերի կարիքների համար: Նման կարմիր, բարձրորակ անգորապատ մակերևույթ ունեցող տարբեր շափերի կավանոթներ՝ զարդարված ուռուցիկ նեղ ելուստանախշերով, որոնք իրենց ձևով հիշեցնում են խեթական, սիրիական, կիպրոսյան մետաղե անոթներ³⁵, գտնվել են Կարմիր բլուրից, էրեբունի միջնադարից³⁶, ինչպես նաև Օշականի տեղական իշխանավորի դամբարանից (Ձ 59, աղ. 2-րդ, նկ. 14):

Երկրորդ տիպի փիլալաները (աղ. 3-րդ, նկ. 1)՝ պատրաստված արծաթից և բրոնզից, ունեն հարթ մակերես, կլորացող իրան, եզրագծված կողեր, քիչ կլորավուն հատակ և հայտնի են Գորդիսից, Պրսեսպուխից³⁷: Նմանատիպ կավե փիլալաները ունեցել են լայն տարածում Վանի թագավորությունում և հայտնի են 36 հուշարձաններից՝ Ղյուսիս և հյուսիս-արևելյան շրջաններ (Արարատյան դաշտ և Արարսի աշափնյա հուշարձաններ), Արգիշտիիսիի³⁸ (աղ. 3-րդ, նկ. 3), Օշական³⁹ (աղ. 3-րդ, նկ. 4), Քեյշեբրահինի⁴⁰ (աղ. 3-րդ, նկ. 2), Բաստամ⁴¹, Վանա լճի ավազան, Քոփրակ կալե, Բաղնոց⁴², Արածանի, Եփրատ գետերի ավազան, Ալթին թեփե⁴³, Ուրմիայի ավազան, Զիվիե, Խոյ և այլն⁴⁴:

Վերը նկարագրված փիլալաների առաջին տիպը ավելի սակավաթիվ է: Խոսելով այս անոթների մասին, Բ. Բ. Պիտրովսկին⁴⁵ նշում է, որ վաղուց արդեն նկատվել է այս անոթների մետաղե սպասքի համանուն ձևերից ընդօրինակված լինելը, որի փայլուն օրինակը նշված հուշարձաններից գտնվածներն են: Միաժամանակ պետք է նշել, որ Վանի թագավորությունում 1-ին տիպի փիլալաները հանդես են գալիս վերջին շրջանում, ինչպիսիք են Կարմիր բլուրի և Օշականի օրինակները: Ինչ վերաբերում է էրեբունից գտնվածներին, ապա հարկ է հիշել Բ. Բ. Պիտրովսկու⁴⁶ հանրահայտ այն կարծիքը, որ Արին Բերդից գտնված փիլալաները գոյատևել են

²⁹ Б. Б. Пиотровский. История и культура Урарту, Ереван, 1944, стр. 271, рис. 73; Ванское царство, стр. 180, рис. 44.

³⁰ Б. Б. Пиотровский. Ванское царство, стр. 180; Кармир блур (альбом), Л., 1970, рис. 73—75.

³¹ L. V. Berghe en L. De Meyer, *նշվ. աշխ.*, նկ. 151—153, 163—165;

³² նույն տեղում:

³³ նույն տեղում:

³⁴ նույն տեղում:

³⁵ Б. Б. Пиотровский. Ванское царство, стр. 180.

³⁶ նույն տեղում, էջ 189; С. Н. Ходжаш. Керамика Эребуни, стр. 136, табл. 1, рис. 2.

³⁷ У. Чгелі, *նշվ. աշխ.*, նկ. 11:

³⁸ А. А. Мартиросян. Аргштихинили, стр. 63, рис. 25 (а—б):

³⁹ У. Ա. Ծալանի 1985 թ. պեղումները:

⁴⁰ А. А. Мартиросян. Город Тейшебаини, рис. 68.

⁴¹ У. Чгелі, *նշվ. աշխ.*, նկ. 11:


⁴² նույն տեղում:

⁴³ նույն տեղում:

⁴⁴ նույն տեղում:

⁴⁵ Б. Б. Пиотровский. Ванское царство, стр. 189—190.

⁴⁶ Б. Б. Пиотровский. Искусство Урарту, стр. 109.



վազ հայկական (արեմենյան) ժամանակաշրջանում, երբ, ըստ երեսույթին, անցումը մետաղից խեցանոթների նմանօրինակ ձևերին տեղի է ունեցել ուշացումով: Ինչպես տեսնում ենք, Վանի թագավորության վերջին շրջանում ընդօրինակված կա՛մ փխալաները և որոշ մետաղե իրերը ձևեր շարունակում են գոյատևել արեմենյան ժամանակաշրջանից սկսած մինչև անգամ անտիկ ժամանակները (2-րդ տիպի փխալաներ), մի հանդամանք, որը վկայում է Վանի թագավորության՝ հետագա ժամանակաշրջանի մշակույթի վրա ազդեցության մասին:

Քսաներ: Այս մետաղական անոթների մի ուշ մեծ խումբ (Թվագրվող մ. թ. ա. 9-7-րդ դդ.), իրենց կա՛մ ընդօրինակման հետ միասին, որ հայտնի են Բիայնական թագավորության կենտրոնական և ծայրամասային շրջանների 36 հուշարձաններից, բաժանվում են 3 տիպի: Առաջինին պատկանող Քսանը (արձաթ, բրոնզ) ունեն կլարացող իրան, ուղիղ ոտեր, կտրված շուրթ և ներքևիված նստուկ: Գրանք հայտնաբերվել են Հասանլուփց, Իզդիրլից, Կարմիր բլուրից (աղ. 3-րդ, նկ. 5, 6): Համանման կա՛մ Քսաները, որոնք այս մետաղե անոթների ընդօրինակում են,

ունեն հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտի հուշարձաններ, Արին Բերդ, Կարմիր բլուր, Արգիշտիխիխի, Բաստամ⁴⁷ (աղ. 3-րդ, նկ. 7), Վանի տարածքի հուշարձաններ՝ Արծկե, Բաղնոց, Արածանի, Եփրատի ավազան, Նորշուն քեփե, Կայալի դերե, Ուրմիայի շրջաններից՝ Հավթվան, Խոյ և այլն⁴⁸:

Երկրորդ տիպին պատկանող բրոնզե թասերը ունեն կլորացող ցածր իրան, եզրագծված կողեր, քիչ դուրս ճկված սրածայր շուրթ, լայն, հարթ հատակ (աղ. 3-րդ, նկ. 8): Այս տիպի կավե ընդօրինակումները հայտնի են հետևյալ շրջանների հուշարձաններից՝ Արարատյան դաշտավայր՝ Արին Բերդ, Արգիշտիխիխի, Բաստամ, Վանի տարածք, Բաղնոց, Արածանի—Եփրատ, Նորշուն քեփե, Ուրմիայից՝ Զիվիե, Խոյ⁴⁹: Փանի որ այս մետաղե թասերի մի մասի վրա պահանջվել է Մենուայի արձանագրությունը, իսկ դրանց կավե ընդօրինակումները գտնվել են նաև ուշ ուրարտական ժամանակաշրջանի վայրերից, ապա դարելի է նշել, որ այս թասերը Բիայնական թագավորությունում հարատևել են շուրջ 200 տարի՝ մ. թ. ա. 9—7-րդ դդ. (աղ. 3-րդ, նկ. 9): Այս տիպին են մոտենում մի խումբ բրոնզե թասեր՝ գտնված Իզդիրից, Բաղնոցից, որոնք տարբերվում են եզրագծված կողերով, դուրս ճկված շուրթով (աղ. 3-րդ, նկ. 10): Նման կավե անոթների տարածման սահմանները հետևյալն են՝ Արարատյան դաշտավայր՝ Բաստամ, Իզդիր, Արգիշտիխիխի, Վանի տարածք, Քոփրակ կալե, Բաղնոց, Արծանի, Եփրատ, Նորշուն քեփե, Ուրմիայից՝ Հասանլու, Լիվար և այլն⁵⁰ (աղ. 3-րդ, նկ. 11): Երրորդ խումբը Գերկայացված է Կարմիր բլուրի բրոնզե թասերով, որոնք ունեն ուղիղ կտրված շուրթ, սահուն լայնացող կողեր, հարթ հատակ, Մենուայի, Արգիշտի 1-ինի, Սարգուր 2-րդի, Ռուսա 1-ինի սեպագրերով, ինչպես նաև կենդանիների, թռչունների, բուսական զարդանախշերի և խորհրդանշաններ պատկերներով (աղ. 3-րդ, նկ. 12): Այս տեսակի արծաթե, բրոնզե թասեր գտնվել են Վանի թագավորության կենտրոնական շրջաններից և պահվում են լես Արսի թանգարանում⁵¹՝ աղ. 3-րդ, նկ. 13, 14): Այս խմբի ընդօրինակված կավե անոթները լայն տարածում են ունեցել Արարատյան դաշտավայրի հուշարձաններում⁵²: Կարմիր բլուր, Էրբունի, Արգիշտիխիխի, Օշական, և առավել տիպական են այս շրջանի համար (աղ. 2-րդ, նկ. 15):

Բացի վերը նշված սպասքի ձևերից, բիայնացիների նյութական արտադրությունում հանդիպում են նաև մետաղե տարբեր իրեր՝ սկահակ-ծխամաններ, կանդելաբր-ճրագներ, որոնք կավե արտադրության մեջ ստանալով մասսայական բնույթ, լայն տարածում են ունեցել Վանի թագավորության տարբեր շրջաններում:

Միաժամանակ: Չնայած այս խմբի մեթաղե անոթների վերաբերյալ մենք չունենք որևիցե նյութական փաստարկ, բայց կավե ծխամանների ընդօրինակման մասին (մետաղից) մեզ համար աղբյուր է Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի թողած բարձրաքանդակը⁵³, որտեղ պատկերված է Մուսասիրի տաճարի գրավման և ավարի կշռման տեսարանը: Այստեղ առանձնանում է ասորական զինվորի պատկերը, որը ուսի վրա տանում է սկահակը⁵⁴: Այս բարձրաքանդակը առայժմ միակ փաստն է ուրարտական մետաղե սկահակների առկայության: Ինչ վերաբերում է կավե նմանօրինակ անոթներին, ապա դրանք իրենց ձևերով բաժանվում են երկու տիպերի: Առաջին տիպի սկահակները իրենցից ներկայացնում են երկմասանի անոթներ՝ բաղկացած սնամեջ ոտքից և կլորացող իրանով վերնամասից, որի վրա արված են ուղղանկյուն, եռանկյուն և ձվածիր անցքեր: Սրանք հայտնի են հետևյալ շրջանների հուշարձաններից՝ Արարատյան դաշտավայր՝ Կարմիր բլուր, Արգիշտիխիխի, Էրբունի, Օշական, Բաստամ, Վանի տարածք, Արծկե, Քոփրակ կալե, Բաղնոց, Հայկաբերդ (Չավուշ քեփե), Արածանի—Եփրատ Ալթին քեփե, Կայալի դերե, Ուրմիայից՝ Հավթվան, Չենդան⁵⁵ (աղ. 3-րդ, նկ. 16, 17):

Երկրորդ տիպի սկահակները երկմասանի են՝ բաղկացած սնամեջ հենակից և թասանման մասից: Այս անոթները ունեցել են հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտ՝ Արգիշտիխիխի, Կարմիր բլուր, Բաստամ, Վանի տարածք, Քոփրակ կալե, Բաղնոց, Արածանի—Եփրատ՝ Կայալի դերե, Ուրմիա՝ Զենդան, Պերսեպոլիս, ինչպես նաև Քել Հալաֆ և Գորգին⁵⁶ (աղ. 3-րդ, նկ. 18—24):

⁴⁷ Ս. Կռոյ, նշվ. աշխ., նկ. 8:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, նկ. 13 (a):

⁵¹ L. V. Berghe en L. De Meyer, նշվ. աշխ., նկ. 161—162.

⁵² И. С. Ходжаш. Керамика Эрбунн, табл. 3. рис. 13—14; А. А. Мартиросян. Ар- гиштихиняли, рис. 21—24, 65—68.

⁵³ Б. Б. Пиотровский. История и культура Урарту, табл. 4; Ванское царство, табл. 7.

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Ս. Կռոյ, նշվ., աշխ., նկ. 47 (a, c):

⁵⁶ Նույն տեղում, նկ. 47 (b):

Ճրագներ: Բիսյանցիների բազմատեսակ խնցանոթների մեջ իր ուրույն տեղն ունի ճրագների խումբը: Քասի ձև ունեցող այս անոթները գտնվել են ուրարտական ամենատարբեր հուշարձաններից՝ քնակավայրերի մասաններից, սենյակներից, դամբարաններից և բաժանվում են երկու տիպի՝ բարձրորակ, կարմիր անգորսապատ, կոպիտ՝ ծածկված համարյա աննկատ զեղնավուն անգորով: Կավե անոթների այս խմբի մի մասը նույնպես համանման մետաղե իրերի ընդօրինակում է: Առայժմ եզակի նմուշ հանդիսացող բրոնզե ճրագը (Բեռլինի թանգարան) իրենից ներկայացնում է կլորացնող թաս, 15 սմ տրամագծով. քիչ ընդգծված դուրս ելնող ծորակ թթիկով: Լուսնաձև միջնապատը թասը բաժանում է երկու անհավասար մասերի, որի վրա արված են երկու ձվածիր անցքեր՝ պատրույզի համար: Ճրագի շուրթի տակից ամրացված է աղեղնաձև հարթ շեղք, որի կենտրոնով անցնում է տափակ երկարավուն ձող՝ հավանաբար կատարելով բռնակի դեր⁵⁷: (աղ. 3-րդ, նկ. 25): Կավե ճրագները շունեն նման բռնակներ, բայց բուն թասանման իրանը, ինչպես նաև միջնապատի կառուցվածքը կրկնում են վերը նկարագրված բրոնզե ճրագի ձևը և ունեն հետևյալ տարածումը՝ Արարատյան դաշտավայր՝ էրեբունի, Կարմիր Բլուր, Արգիշտիիների, Օշական, Բաստամ, Վան, Քոփրակ կալև, Արծկե, Արածանի—Օփրատ՝ Ալթին թեփե, Կայալի դերե, Ուրմիա՝ Լիվար, Հավթվան, Ջիվի (աղ. 3-րդ, նկ. 26—29): Այս տեսակետից մեզ համար կարևոր է նաև բրոնզե, երկաթե կանդելյարների⁵⁸ (Նոտանիների) առկայության փաստը (Քոփրակ կալից և Կարմիր Բլուրից), որոնց վերին մասը կամ հարթ է, կամ թասանման կլորացող: Հավանաբար սրանք հենակի դեր են կատարել, որոնց վրա, ըստ երևույթի, դրվել են մետաղե ճրագներ: Այս ենթադրության օգտին է վկայում վերը նշված (Բեռլինի թանգարանի) բռնակով մետաղե ճրագը:

Անգորսապատով Քոփրակ կալի կանդելյարին, պետք է նշել, որ սրա ձողը զարդագրված է առեկաձև պատկերով, իսկ Նոտանու հենակները ցլի ոտքերի ձև ունեն: Վերջիններս կարծես թե դուրս են գալիս ինչ-որ գիշատիչ գազանի երախից: Նոտանու յուրաքանչյուր ոտքին քանդակված է նստած սֆինքսի պատկեր: Նման քանդակազարդ, սակայն շափերով փոքր կանդելյարներ⁵⁹ (Լուվր) գտնվել են Վանի թագավորության տարբեր վայրերից: Կասկածից վեր է, որ արվեստի այս բարձրանմուշ առարկաները ծառայել են վերնախավի կարիքներին, հանդիսանալով նրանց ապարանքների, դղյակների, սենյակների կահավորանքի բաղկացուցիչ մասը:

Ինչպես տեսնում ենք, մետաղե իրերի ընդօրինակումը հին արևելյան կավագործության մեջ սկիզբ է առել մ. թ. ա. 2-րդ հազարամյակի առաջին քառորդում և լայնորեն տարածվել Վանի թագավորությունում: Այս ընդօրինակումը, ըստ երևույթի, տեղի է ունեցել երկու ձևով: Առաջինը՝ անմիջապես մետաղե իրերի կատարված կրկնօրինակումն է, երկրորդը՝ կրկնօրինակված խնցանոթների ընդօրինակումը, որն աճելի մասսայական քույմ ուներ: Ինչպես ցույց են տալիս հնագիտական նյութերը, այս պրոցեսն ունի բավական խոր արմատներ և փաստագրված է սկսած նրա ամենավաղ փուլերից, որի մասին են վկայում Իշուպինի, Մենուայի և մյուս թագավորների հիշատակությունները: Կարելի է ենթադրել, որ այս մետաղե թասերի խումբը, ընդօրինակված անոթների հետ մեկտեղ, հիմնականում տարածված է եղել Արարատյան դաշտավայրի մ. թ. ա. 3—7-րդ դդ. հուշարձաններում և առավել բնորոշ է այս շրջանի համար: Անրնգմեջ ընդօրինակման մասին է վկայում նաև այն փաստը, որ Վանի թագավորության վերջին շրջանում մետաղե մեկ կանթանի սափորները որոշ ձևական փոփոխություն են կրում, այն է՝ օյնախոյանների շուրթերը կլորանում են: Հետաքրքիր է նշել, որ նույն երևույթը նկատվում է նաև տեղական մեկ կանթանի սև սափորների շուրթերի ձևավորման մեջ, որը վկայում է տեղական և ուրարտական խնցագործական արվեստի կապերի մասին:

Ուսումնասիրելով այս ընդօրինակված անոթների ձևերը՝ կարելի է նկատել, որ կավագործ վարպետներից պահանջվում էր ոչ թե անոթի մեխանիկական կրկնություն, այլ ընդհանուր ձևերի պահպանում: Պարտադիր պահանջ էր նաև խնցու որակի և հատկապես անգորսապատման մեթոդների նույնությունը, որով Վանի թագավորության բարձրորակ խնցեղենի հիմնական խցմբորը խիստ տարբերվում են նույն ժամանակի Հայկական բարձրավանդակի և հարևան երկրների հուշարձաններից գտնված այլ խնցանոթներից: Բացի մետաղե իրերի բուն արտաքին ձևվերից, կավանոթներում ընդօրինակվել են նաև այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են անոթների հատակների կառուցվածքը (օղակաձև, ներճկված), իրանի վրայի ուռուցիկ գգալաձև ելուստանախշերն ու ուռուցիկ գոտիները:

Մետաղե ընդօրինակում հանդիսացող մի խումբ խնցանոթներ (թասեր, փիլաներ), ունենալով լայն տարածում Վանի թագավորությունում, իրենց Աներով շարունակել են գոյատև-

⁵⁷ L. V. Berghe en L. De Meyer, նշվ. աշխ., նկ. 51:

⁵⁸ Б. Б. Пиотровский. Кармир блур, I, Ереван, 1950, стр. 69—70, рис. 42; Вавское царство, стр. 174—175, рис. 35.

⁵⁹ L. V. Berghe en L. De Meyer, նշվ. աշխ., նկ. 183, 184:

վել վաղ հայկական և ավելի ուշ ժամանակաշրջաններում, որոնց մասին նշել է Բ. Բ. Պիոտրովսկին՝ ուսումնասիրելով Արին Բերդի և Կարմիր բլուրի նյութերը:

Վանի Թագավորության խեցեգործության, ինչպես նաև մետաղե զենքի, զարդի շատ նմուշներ շարունակել են հարատևել նաև հետագա ժամանակաշրջանում, դառնալով հայ ժողովրդի նյութական մշակույթի բաղկացուցիչ մասը:

Г. Г. АВЕТИСЯН—Имитация металлических форм в керамическом производстве Ванского царства.—Начиная со II тыс. до н. э. среди керамических находок на территории Армении встречаются сосуды, имитирующие формы металлических изделий. Этот процесс особенно четко наблюдается в керамическом производстве периода Ванского царства, когда бурно развивалась металлообработка и изготовление металлической утвари.

В керамических изделиях этой эпохи преобладают формы различных бомбовидных сосудов, одноручных кувшинов, кубков, курильниц, светильников, чаш, фиал и т. д. Примечательно, что при имитации проявляется стремление гончаров не только сохранить формы металлических сосудов, но и некоторые детали декора: ребристые пояски на туловах кувшинов, строение венчиков и ручек. Некоторые формы этих высокохудожественных сосудов продолжают бытовать и в ранне-армянское время и свидетельствуют о преемственности и традиционности материальной культуры Армении.